ԲԱՆԽՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՆԸ ԿԱՐՍՈՒՄ

ԵՐՈՒԱՆԴ Ղ.ԱԶԱՐԵԱՆԻ

Շատ սրտակտուր տեսարան է ներկայացնում բանտորների կեանքը՝ օր ըստ օրէ նորոգուող և կերպարանափոխուող Կարսում։ Բազմաթիւ արքունական և մասնաւոր շինութիւնները անդադար ժողովում են այս փոքրիկ քաղաքի մէջ բանտորների մի այնպիսի մեծ քանակութիւն, որ ամենևին չը տեսնուած երևոյթ է միւս զաւառական և նահանգական քաղաքների համար։ Ներկայումս Կարսի զանազան մասերում՝ թէ քաղաքի մէջ և թէ քաղաքից դուրս՝ ամառը, արեգակի այրող ճառագայթների տակ, զարնանը և աշնանը՝ ցրտի, անձրևների և կտրող քամիների ենթարկուած՝ աշխատում են բազմաթիւ անտուն և աղքատ մարդիկ, ոլոնք տեղական լեզուով կոչւում են «իրղատներ» (բանտորներ)։ Նրանք բոլորն էլ օտարական են, Ցանկա-Հայաստանի գիւղերից և քաղաքներից ճնշուած, հալածուած և օտարութեան մէջ իրանց ապրուստը որոնող մարդիկ։ Ցանկա-Հայաստանի տնտեսական և բարոյական կրիղիսը ծանր հարուածներ է տալիս ժողովրդի ստորին դասակարգի, ամբոխի ընդհանրութեանը և բաժանում, ցրւում, հեռացնում է ժողովուրդը իւր հայրենիքից։ Ահա՛ այդ բաժանուած և հալածուած ամբոխն է, որ գաղթում է ահագին խմբերով դէպի մեր կողմերը և, իւր առօրեայ կտոր հացի համար, լանձնառու է լինում կատարել ամենն տեսակ ծանր ֆիզիկական աշխատանք։ Այդ գաղթական հալ մարդկանց դրութիւնը աւելի պարզ կերպով աչքի է ընկնում, երբ նրանք խմբուած, ժողովուած են լինում որ և իցէ մի տեղում և պարապում են միատեսակ ընդհանուր աշխատանքով։ Հէնց այդպիսի պայմանների մէջ են և Կարսի իրղատ-բանտորները։ Նրանք ապրում են խմբերով, աշխատում են միասին և կեանքի մի և նոյն պայմանները, մի և նոյն զրկանքը. մի և նոյն չարչարանքը և նեղութիւնը տանում են ընդհանուր և ներդաշնակ համբերութեամբ։ Շատ հետաքրքրական է դիտել նրանց հասարակական կեանքը և յարաբերութիւնները, նրանց խմբական ընդհանուր ոգին, այն ընդհանուր ոյժը, որ կապում, ամրացնում է այդ խեղճ հասարակութեան

անդամներին։ Իսկապէս, հասարակութիւն խօսքը այստեղ անլարմար է. հասարակական կեանք և լարաբերութիւններ, բուն մտքով, ինչպէս որ հասկացուում է գիտակցական լարաբերութիւնների մէջ, ամենևին չը կայ այստեղ։ Չը նայելով բանուորական կեանքի և ապրուստի միակերպութեանը, չը նայելով որ նրանք միշտ և ամենևին հանգամանքում, թէ բարոյական և թէ տնտեսական կապերով միացած են իրար հետ, բայց մենք տեսնում ենք, որ այդ անտեսական և բարոյական կապը, այդ ընդհանուր միացնող ոգին չի տալիս բանուորներին ոչ մի ոյժ, ոչ մի օգտակար հասարակական արտօնութիւն։ Բանուորների միացած համալնական կեանքը շատ քիչ է նպաստում նրանց բարեկեցութեանը, շատ չնչին ազդեցութիւն է անում նրանց ընդհանուր ապահովութեան և երջանկութեան վերայ։ Նրանք թէև ապրում, աշխատում և չարչարուում են միասին, թէև կեանքի բոլոր դառնութիւնները տանում են ընդհանուր, համալնական ոյժերով, բայց նրանցից իւրաքանչիւրը, որպէս անհատ, չի ղգում այդ խմբական ոյժի նշանակութիւնը իւր մէջ, և կեանքի վտանգալից րոպէներում, դոյութեան կամ ոչնչութիւնից ալէկոծութիւնների ժամանակ՝ բանուորը, որպէս մի առանձին և անօգնական էակ, երևում է վախկոտ, թոյլ և անպաշտպան...

Որպէս զի համոզուինք՝ թէ որքան մեծամեծ վնասներ է տալիս այդ վախկոտութեան և թուլասրտութեան զգացմունքը հայ ժողովրդին, մենք ուշադրութեամբ դիտենք կարսում աշխատող բանուորների առօրեայ կեանքը. նրանց ընդհանուր դրութիւնը և այն լարաբերութիւնը, որ գտանուում է այդ բանուորների և տեղական ռուսահպատակ հայերի մէջ.

Ամենից առաջ պէտք է նկատել այն աչքի ընկնող երևոյթը, որ տեղացին, Կարսի և Ալէքսանդրոպոլի բնիկ ժողովուրդը, երբէք չի ուզում ընդունել, որ այդ գաղթական բանուորները մեզ նման հայեր են, որ այդ խեղճ և ցնցոտիներով պատած ամբոխը՝ մեր արիւնակից հարազատ եղբայրներն են... Մի տեսակ անզգայ սառնասրտութեամբ, մի տեսակ խորթ զգացմունքով են վերաբերուում տեղացի հայերը դէպի այդ խեղճ մարդիկ, դէպի այդ անտէր և անօգնական արարածները։ Ցեսնելով նրանց սաստիկ աղքատութիւնը, տեսնելով նրանց տոկուն, համբերող և անխոս աշխատասիրութիւնը, նրանց վերին աստիճան ազնիւ, միամիտ և հեղ, ենթարկող բնաւորութիւնը՝ տեղացի ժողովուրդը, կարծես, աւելի ՝ղայրանում, աւելի դրգռուում է նրանց դէմ, աւելի սառնասիրտ և անզգայ է դառնում դէպի նրանց թշուառութիւնը։ Մեր ժողովրդի կարծիքով, տաճկաստանցի բանուորը անասուն է, նա չէ արժանի մարդկանց ուշադրութեան, նա ստեղծած է շարունակ աշխատելու, շարունակ տանջուելու և կեանքի մէջ ամենատեսակ նեղութիւններ ու զրկանքներ տանելու համար։

Ահա այն ընդհանուր կարծիքը, որ տիրում է մեր ժողովրդի մէջ բանուորների մասին, ահա այն գլխաւոր անբարոյական սկզբունքը, որով առաջնորդուում են մեր մեջ, սկսած հարուստ պօղոսաղչիկներից մինչև

լետին խանութպանը—վերաբերութեամբ աղքատ և մոլորված բանուորների։ Բանուորը խեղճ է, նա լեզու չունի, նա չի կարող պաշտպանել իւր իրաւունքը, իւր ստացուածքը, իւր պատիւը... ուրեմն պէտք է խարել նրան, պէտք է «էշի նման» ծառայեցնել նրան, պէտք է օգուտ ալ այդ անիծուած և միամիտ մարդկանց թուլութիւնից։—Ահա թէ ինչպէս են մտածում մեր վաչխառու աղաները, մեր դուքանդար անխիղճ շարչիները։ Եւ ճշմարիտ որ նրանք օգտուում են բանուորներից և օգտուում են անողորմ կերպով... Փոդրադչիկ աղան երբէք չի խղճահարուում կտրել բանուորների թոչակից մի քանի կոպէկ՝ հաստատ գիտենալով, որ այդ մեղքը ոչ մի հետևանք չի ունենալ, որ խեղճ բանուորները անկարող են դանդատուել։ Եւ նա կտրում է հարիւրաւոր բանուորների թոչակից մի կամ երկու կոպէկ իւրաքանչիւրից և տարեալ վերջը՝ ստացում է աղալի բիւջետում «սօլիդնի կապիտալ»։ Չարչի մանրավաճառը անողորմաբար դրաւում է բանուորներին իւր մօտ, գողանում է նրանց հաւատարմութիւնը և ստանալով իւր մօտ պահելու հարիւրաւոր բանուորների տնտեսած փողերը, մի դեղեցիկ օր բոլորովին ուրանում է այդ փողերը, թողնելով բանուորներին ծայրալեղ կենսական պայմանների մէջ։ Իսկ ինքը սկսում է աւելի ճոխացնել իւր դուքանը, աւելի շատացնել ապրանքի «էշիլոնները»... Եւ այսպիսի դէպքերը այնքան սովորական, առօրեայ բաներ են, որ հասարակութիւնը չի էլ դարմանում դրանցով, չի էլ դրգռուում այդպիսի չահադիտական «հերոսութիւններով»։

Տաճկաստանցի պանդուխտ բանուորը, ձմրան ցրտերի և անգործութեան ժամանակ, դիմում է տեղացի աղաներին, որ ընդունեն նրան, որպէս տան ծառայ, կամ դուքանի աշխատող և այլն։ Այստեղ նոյնպէս աղաները աշխատում են օգտուել այդ անգործ ոյժից, այդ էժանագին և օգտակար ապրանքից։

—Փոր հացի, կ'ուզես արի, չես գալ՝ ուրիշներ շատ կան,—ասում է դուքանդար աղան՝ դուրսը մնացած, սովից և ցրտից կապտած բանուորին։ Եւ բանուորը, գիտենալով որ «ուրիշներ շատ կան», համաձայնում է ամբողջ ձմրան ընթացքում, շարունակ 5—6 ամիս, դառն աշխատանքով ծառայել հարստահարիչ աղալի տանը՝ վայելելով նրանց տան սեղանի մնացորդները և դորա հետ էլ անվերջ անէծքներ, հոյհոյանքներ ու շատ անգամ էլ վարեանի ծեծ՝ իւր խանումների և աղաների կողմից...

Եւ այս բոլոր զրկանքները համբերութեամբ, զլխակոր և հլու հնազանդութեամբ տանում է տաճկա-հայաստանցի պանդուխտը, առանց մտածելու, որ ինքը Տաճկաստանի մէջ չի ապրում, առանց հասկանալու՝ թէ մեզանում օրէնք կայ, դատաստան կայ, որ կարող է պաշտպանել խեղճերին, որ կարող է դուրս քերել ճշմարտութիւնը և պատժել «աւազակներին»...։ Ընդհակառակ՝ փոխանակ պաշտպանելու սեպհական չահերը և իրաւունքները ուրիշների դէմ, փոխանակ աշխատելու, որ գանգատն հարստահարիչ պաշաներ չը խլեն իրանց. ձեռքից սեպհական աշխատանքի արդ-

դիւնքը, չը հարսահարեն նրանց ֆիզիքական ոյժը,—կարսի բանտորները, այդ բոլորի փոխարէն, աշխատում են, որքան կարելի է, «իրանց դրիկը», իրանց կեանքի և ապրուստի պահանջները քչացնել, ողել և անսահման փոքր քանակութեան հասցնել... Նրանք իրանց բոլոր դառնութիւնը և վիշտը թափում են իրանց վերայ՝ կեանքի արտաքին հանգամանքներից ճնշած, դարձած։ Նրանք բոլոր ոյժով սկսում են հալածել, տանջել և մաշել իրանց՝ առանց այն էլ տանջած և չարչարած մարմինը... Եւ այդ է բանտորների միակ «խելացի», միակ լուրջ հասկացողութիւնը կեանքի մէջ. փողը տնտեսել, «չխիչ» անել, կտրել իւր բերանի հացը, ամիսներով տաք կերակուր չ'ուտել, մի կեղտոտ շապիկով ամբողջ տարին անցկացնել, որպէս զի տարեայ վերջը մի 30—40 մանէթ ունենայ իւր ծոցում, երբ հարկաւոր է վերադառնալ հայրենիք, իւր ծնողներին, իւր հնոցն և դաւակներին ուրախացնելու։ Ահա այդ վերջնական նպատակի համար է մտածում բանտորը, այդ է նորա երևակայած ապագայ երջանկութիւնը։ Բայց թէ կը հասնի նա իւր նպատակին,—այդ դեռ ճակատագրական մի հարց է... Կեանքի անողորմ և դառն հանգամանքները ինչեր չեն բերում խեղճ մարդու գլխին. և վերջապէս, մինթէ հեշտ բան է ասել՝ «մի կերպ եօլա դնալ».—այսօր քաղցած, վաղը կիսակուշտ, միւս օրը դարձեալ քաղցած... ծանր աշխատանք, ցուրտ, քամի, անձրևներ, քրտինք, յոգնածութիւն... Ահա թէ ինչ ասել է բանտորների լեզուով «եօլա դնալ» խօսքերը։ Մարմինը չափազանց կեղտոտում է աշխատանքից, փոշուց, քրտինքից. նորա շապիկը անտանելի հոտ է արձակում,—պէտք է լուացուել, պէտք է մաքրուել այդ կեղտերից... Չէ՞ որ նա էլ մարդ է, նրանումն էլ կայ մաքրասիրութեան գաղափարը։ Եւ ահա բանտորները խմբերով վազում են դէպի դեռը լողանալու։ Նախ հանում են վերայի ցնցոտիները, լեռայ կեղտոտ հաստ կտաւէ շապիկը,—այն շապիկը, որ ամբողջ տարին հագնում են նրանք—և սկսում են լուանալ։ Լուացքի ժամանակ, որ տեսում է բաւական երկար, բանտորներից շատերը մերկ մարմնով նստած են արևի և քամու տակ... Բայց այդ ոչինչ. նրանք ջանասիրութեամբ լուանում են շապիկները, փռում են արևի տակ, քարերի, կամ աւազի վերայ և վերջապէս իրանք էլ ընկնում են ջուրը, լողանում են։ Սապոն ունեցողը իւր սապոնի կտորը տալիս է միւսին, որ գլուխը լուանայ, իսկ եթէ ոչ՝ առանց սապոնի էլ «եօլա» կ'երթայ։ Այսպէս մի ժամ, երկու ժամ լողանալուց և մաքրուելուց յետոյ, բանտորները դուրս են գալիս դեռից, հագնում են իրանց «մաքուր» շորերը, նստոտում են դեռի եզերքին և աղլուխներից հացի կտորները հանելով՝ սկսում են ուտել այդ ցամաք հացը և աշխոյժ խօսակցութիւններ անել... Նրանց խօսակցութիւնը շատ միակողմանի, պարզ և անմեղ է։ Նրանք այստեղ էլ շարունակ խօսում են «չխիչ անելու», փող լեռ դցելու, հայրենիք վերադառնալու մասին... Յանկարծ դեռի միւս ափին՝ մաքուր խնուղու վրայով՝ անցնում է մի հարուստ կառք, լծած երկու գե-

զեցիկ սև ձիերով։ Կառքի միջից մի չքնաղ հագուստով, սիրուն երիտասարդ, պապիրոսը բերանին, դուրս հանեց իւր գլուխը և արհամարհական հետաքրքրութեամբ նայեց բանուորներին։

—Աղէ՛ն, աղէ՛ն, աղէ՛ն, իրար անցան չփոթուած բանուորները։ Կառքը արագութեամբ անցաւ, տանելով իւր մէջ դիւթական աղաւին։ Բայց աղաւի մասին զարթնած լիչողութիւնները դեռ երկար չփոթում, զայրացնում և ալէկոծում էին բանուորների անարատ հոգին. նրանք շատ երկար խօսում և վիճում էին աղաւի «գործերի» և արարքների մասին... Սակայն, այդ բոլոր խօսակցութիւններից յետոյ, տիրեց մի երկարատև, մեռելային լռութիւն. երբ խօսակիցները դարձեալ մտաբերեցին իրանց անկարողութիւնը, իրանց թուլութիւնը և վախկոտութիւնը աղանեերի դէմ։

Այս փոքրիկ պատկերով ես կամեցայ լրացնել այն տպաւորութիւնը, որ մարդ ստանում է Կարսի բանուորների դրութիւնից, երբ ուշադրութեամբ և բարեխղճօրէն հետևում է նրանց առօրեայ կեանքի մանրամասն երևոյթներին։ Ես ասում եմ «բարեխղճօրէն», որովհետև հասարակական կեանքի չարիքը և խոշոր թերութիւնները նշմարելու, զգալու համար՝ անհրաժեշտ է ունենալ ազնիւ և անարատ խիղճ, անկաշառ և մարդասիրական բարձր զգացմունքներ։ Հէնց այդ հոգեկան ընդունակութիւնների պակասութիւնից է, որ մարդ կարողանում է սառնութեամբ և անվրդով նայել ուրիշի թշուառութեան վերայ, կարողանում է հասարակական ողբալի անարդարութիւնների «մօտով անցնել»...

Կարսի բանուորների թէ տնտեսական և թէ հոգեկան կեանքը շատ ողբալի տպաւորութիւն է անում ամեն մի զգալուն մարդու վերայ. այդ թերութիւնները նշմարելու, զգալու համար՝ պէտք է, որ մարդ միայն փրչացած չը լինի բարոյապէս, պէտք է, որ նորա խիղճը բոլորովին մեռած չը լինի վաճառականական ստոր «հաշիւների» տզրնեցութեան տակ։ Ան ինչ մենք տեսնում ենք, որ կարսցի վաճառականը, փոդրաղչիկը, վաչխատուն, փոխանակ ցաւակցելու Ցանկա-Հայաստանից եկած մեր թշուառ եղբայրներին, փոխանակ աշխատելու սփոփել նրանց ցաւերը, մեղմացնել նրանց վիշտը և տառապանքը,—աշխատում են դեռ վնասել նրանց, աշխատում են հարստահարել, կողոպտել այդ խեղճ պանդուխտներին... Արդէն լալտնի է թէ ինչպիսի մեծամեծ չոլերով են գալիս մեզ մօտ այդ բանուորները և ինչ բարիքներ են սպասում, առհասարակ, տաճկահայ գիւղացիք մեզանից։ Փոխանակ օգնելու այդ խեղճերին, որ շուտով կարողանան «դրստել» իրանց գործը և վերադառնալ հայրենիք,—իրանց ընտանիքի օգնութեանը հասնելու, մենք, ռուսահայերս, աւելի նպաստում ենք այդ պանդխտութեան երկարելուն, աւելի չարչարում, տանջում և տնտեսական նոր կապերով ամրացնում ենք նրանց մեր չտնտեսական գործերի և ծառայութիւնների հետ։ Այսպիսով, տաճկահայ գիւղացին, ցանկալով ա-

դաստել իւր ճնշող վաշխառուների կիշակեր ճանկերից, թողնում գալիս է մեզ մօտ, զրկւում է իւր ընտանիքից, իւր հարազատների երկրից, իւր սիրած պարապմունքից, միայն թէ կարողանայ դրստել ինքն իրան... և այսպէս, մեզ մօտ, նա նորից բռնւում է վաշխառուների ճանկերում, նորից պարտքերի մէջ է ընկնում։ Այսպիսով շարունակւում է նորա պանդխտութիւնը, նորա օտարական, մերկ, քաղցած և անպատիւ, արհամարհած կեանքը։ Նա աշխատում, կաշուց դուրս է գալիս, առանց խնայելու իւր ոյժերը, իւր առողջութիւնը, իւր կեանքը։ Սակայն դարձեալ չի կարողանում լետ դցել իւր ցանկացած 30—40 ր. գումարը, որ թողնի և հեռանայ պանդխտութիւնից, որ գնայ իւր եղբայրների, իւր սիրելիների «հաւարին հասնի»։ Անցնում են տարիներ միմեանց ետևից, գալիս են նորերը և պանդուխտի սիրտը չի տաքանում Կարսի անհիւրընկալ ապառաժների տակ... Նա օր ըստ օրէ տառում, հոմանում, անզգայ է դառնում դէպի իւր հայրենի երկիրը, դէպի իւր քաղցր բարեկամները և ազգականները։ Եւ այսպիսի վախճան սպասում է հարիւրաւոր, հազարաւոր մարդկանց...

Այժմ դառնանք Կարսի բանւորների աշխատութեան խնդրին և տեսնենք թէ ի՞նչ պայմաններում, ի՞նչ եղանակով է կատարւում այդ և ի՞նչպիսի վարձատրութիւն է տալիս բանւորներին։ Որովհետև Կարսում չը կան գործարաններ և արդիւնաբերական պարապմունք, ուստի և բանւորների աշխատանքը չ'ունի մշտական բնաւորութիւն, չ'ունի այն սիստեմը, ինչ որ կարելի է նշմարել՝ օրինակ՝ Բաքուի նման մի արդիւնաբերական կենդրոնում։ Ինչպէս վերևում էլ ասացի՝ Կարսում շարունակ լինում են բազմաթիւ թէ արքունական և թէ մասնաւոր շինութիւններ։ Հէնց այդ շինութիւնները—կազարմներ, հիւանդանոցներ, մասնաւոր տներ և մանաւանդ կրպակներ—դրաւում են բանւորների ահագին խումբերին՝ դէպի վերանորոգող զինւորական Կարսը։ Բացի այդ շինութիւններից, բանւորների համար մշտական աշխատանքի ասպարէզ են ներկայացնում խանութները, որոնց վերայ շարունակ աշխատում են նրանք։ Ուրեմն այստեղ բանւորական աշխատանքը ոչ թէ փակւած է զանազան հիմնարկութիւնների մէջ, այլ բացօդեայ, ազատ աշխատանք է։ Բանւորները աշխատում են ճանապարհների վերայ, աշխատում են շինութիւնների մէջ—և այդ բոլոր աշխատանքը նրանք կատարում են բացօդեայ՝ մեծ մասամբ հողի, աւազի և քարերի հետ։ Հէնց այդպիսի պարապմունքին՝ Կարսի, Ալէքսանդրոպոլի կողմերում տալիս են յատկապէս «իրղատութիւն» անունը։ Կարսի բանւորները, դիտաւորապէս, իրղատներ են։ Աշխատութեան այս եղանակը ունի այն առաւելութիւնը, որ բանւորները միշտ շնչում են մաքուր օդ և բոլորովին ազատ են գործարանական ապականւած և վնասակար մթնոլորտից։ Այս է պատճառը, որ առողջապահական միւս վատ պայմանները, մանաւանդ անունդի վատութիւնը, շատ չի ազդում բանւոր-

ների առողջութեան վերաբ. այս է պատճառը, որ Կարսի բանուորները թէև ամիսներով «սաք կերակուր» չեն ուտում,—բայց դարձեալ առողջ են, դարձեալ կարողանում են աշխատել։ Մաքուր օդը և մշտական շարժողութիւնը փրկարար աղդեցութիւն են անում բանուորների առողջութեան վերաբ և ազատում են նրանց թոքախտից, արեան սակաւութիւնից (малокровіе), սրտի և կուրծքի զանազան հիւանդութիւններից, որոնք անբաժան են գործարաններում աշխատող բանուորների հետ։ Ի հարկէ բացօդեայ ֆիզիքական աշխատանքը ունի և իւր անդարմարութիւնները. ամառուայ արեգակը և լանկարձական փչող ցուրտ քամիները՝ աշխատութիւնից քրտնած բանուորների վերաբ՝ կարող են երբեմն զդալի վնասներ տալ նրանց։ Բայց այստեղ սովորութիւնը և կեանքի փոթորիկներից ստացած տոկունութիւնը, անշուշտ, ունին մեծ նշանակութիւն՝ մարմնի առողջութիւնը պահպանելու համար։ Ընդհանրապէս՝ Կարսի բանուորները աւելի առողջ են, քան տկար. զանազան տարափոխիկ վատ ախտեր, որ շատ լատուկ են մեծ կենդրոններում ապրող բանուորներին—այստեղ դեռ մուտք չեն գործել բանուորների մէջ։ Այստեղի բանուորները մաքուր, անարատ, «քրիստոնէական» կեանք են վարում.—նրանք աւելի աշխատում են, քան թէ ուտում իրանց աշխատածը, աւելի ընդունակ են պահեցողութիւն անել, քան թէ անկանոն վատնողութիւն... Այդ մաքուր և առաքինի սովորութիւնները նրանք ստացել են փոքր հասակից երկրագործական պարապմունքի շնորհիւ։

Կարսի արքունական բոլոր շինութիւնները և խճուղիներ բանալու, նորոգելու գործերը ամբողջովին գտնւում են մի քանի հարուստ կապալառուների ձեռքում։ Այդ հարուստ գլխաւոր «պօդրեադչիկները» վերցնում են ահագին գործեր, ահագին գումարների շինութիւններ։ Գործի չափազանց մեծութիւնը և բարդ կազմակերպութիւնը ստիպում է նրանց պարզել, հեշտացնել այդ գործը, դիմելով աշխատանքի բաժանման սկզբունքին։ Եւ ահա գլխաւոր պօդրեադչիկը առաջարկում է ուրիշ աւելի քիչ հարուստներին՝ վերցնել իւր ունեցած գործի այս ինչ կամ այն ինչ մասը և կատարել առանձին պայմաններով, առանձին ոյժերով ու ժամանակով։ Այդ երկրորդական կապալառուները, կամ, ինչպէս ասում են՝ «բեադչիկները», որոշ գումարով և որոշ պայմաններով առնում են մի կտոր գործ և իրանք դառնում են այդ գործի լիակատար տէրը։ Ի հարկէ այս վերջինները, առնելով գլխաւոր կապալառուներից այդ գործը, նրան վճարում են որոշ չափով օգուտ կամ ինտերես, աչքիառաջ ունենալով, որ գործից դուրս կը հանեն թէ այդ վճարած ինտերեսը և թէ աւելի օգուտ։ Նրանք լոյս ունին, որ թէ նիւթերի և թէ աշխատանքի «հարստահարութիւնից» կարող են շատ մեծ օգուտներ ստանալ... Այսպիսի լոյսերով բեադչիկները սկսում են գործը՝ առանց մոռանալու, որ «հարստահարութիւնը» միակ միջոցն է, որով կարելի է ցանկացած նպատակին հասնել—կարճ ժամանակում՝ ահագին փողեր աշխատել... Եւ ահա սկսում է գործը։

«Հեշտ միջոցով, կարճ ժամանակում շատ փող աշխատելու» մտածմունքը անդադար տանջում է գործի տիրոջը և նա գիշեր ցերեկ մտածում, գլուխ է կոտրում՝ հարստահարութեան նորանոր և սրամիտ միջոցներ հնարելու վերաբերեալ։ Ամենից առաջ նա մտածում է բանւորների հետ «գործը չինել»։ Կարսում բանւորների վարձատրութեան մասին ոչ մի օրէնք և մշտական դիրք չը կայ։ Թէ օրական վարձի—«դինտալիկի» և թէ աշխատութեան ժամերի չափը կախւած է վարձողի և բանւորների փոխադարձ համաձայնութիւններից. Ահա հէնց այդ համաձայնութիւն կայացնելու պրոցեսի մէջ մեր ճարպիկ վաճառականները գործ են դնում իրանց առևտրական բոլոր հանճարը... Ի հարկէ նրանց գլխաւոր և ամենամեծ ցանկութիւնն այն է, որ ստիպեն նրանց, ամենաշատ աշխատութեան համար, ստանալ ամենաքիչ վարձատրութիւն։ Այդ նպատակին հասնելու համար՝ վաճառական-բեադչիկները լայն կերպով օգտւում են բանւորների միամտութիւնից, նրանց փոխադարձ անհամաձայնութիւնից, նրանց աղքատ և անգործ դրութիւնից։ Դարնան սկզբին, երբ դրսի աշխատութիւնները դեռ նոր են սկսւում, երբ աշխատութիւն խնդրողները հարկաւոր եղածից անհամեմատ շատ են,—այս դէպքում խօ շատ հեշտ է իրագործել «շատ աշխատեցնելու և քիչ վճարելու» գաղափարը։ Այս դէպքում հանդամանքների ուժը վարձողների կողմն է և բանւորները ստիպւած են օրական 30—40 կոպէկով առաւօտից մինչև երեկոյ աշխատել։ Այդ աշխատութեան ժամանակ օրավարձի քանակութիւնը ենթարկւում է յաճախակի և արագ փոփոխութիւնների, որ պատճառում են դարձեալ ոչ թէ բանւորները, այլ իրանք վարձողները։ Ցանկարծ՝ մի առաւօտ, նրանք յայտարարում են թէ այլ ևս աշխատանք չը կայ, այլ ևս հարկաւոր չեն բանւորները... Այդ մտացածին գործադուլով բեադչիկները 1—2 օր ստիպում են բազմաթիւ մարդկանց անգործ և պարապ մանգալ, թափառելով Կարսի փողոցներում՝ գործ որոնելու։ Այդ պարապութեան ժամանակ՝ բանւորները ծախսում են իրանց խնայած մի քանի կոպէկները, որ շատ դժալի է նրանց համար։ Տեսնելով նրանց պարապ և խեղճ դրութիւնը, փիշեալ բեադչիկները «գթում են» նրանց վերայ և տալիս են աշխատանք, ի հարկէ, աւելի էժան վարձատրութիւնով։ Այս հարստահարութեան միջոցը ամենից շատ գործադրականն է Կարսում։

Բանւորների աշխատութեան գինը ամենից շատ բարձրանում է տաք ժամանակ, երբ դրսի աշխատանքը շատ է և բազմակողմանի և, բացի դրանից, երբ գիւղերում սկսւում է քաղը ու գիւղացիք շատ հարկաւորութիւն ունին քաղւորների։ Ամառւայ յուլիս, օգոստոս ամիսներում Կարսի բանւորները ստանում են 60—65—70 կոպէկ օրավարձ։ Այնպէս որ՝ եթէ միջին թւով հաշւելու լինինք՝ բանւորները ամբողջ աշխատութեան սեզոնում, որ տևում է մօտ 6 ամիս, ստանում են օրական 50 կոպէկ, իսկ ձմեռը մնում են շատերը բոլորովին պարապ։ Եթէ պարապութեան 6 ա-

միեն էլ հաշվենք—դուրս կը գայ, որ տարեայ ընթացքում նրանք ստանում են, միջին թվով, օրական 25 կոպէկ, այսինքն՝ այնքան փող, որքան մենք մսխում ենք օրական լոկ պապիրոսի վերայ... Իսկ բանւորը այդ փողերով պէտք է «ինքը» ապրի և մէկ էլ չետ գցէ, որ մի օր ունենայ 40—50 ռուբլի ճակատագրական գումարը՝ իւր հայրենիքում քայքայւած գործերը դրստելու համար։

Այստեղ ես աչքի առաջ չ'ունիմ այն պատահական դժբաղդութիւնները, որ միշտ հեռու չեն բանւորներից։ Օրինակ՝ աշխատութեան ընդհատումները վատ եղանակի պատճառով, կապալառուների անճշդութիւնը փող վճարելու վերաբերութեամբ և այլն։ Այդ բոլոր դէպքերում զրկւում են միայն աշխատաւորները։ Ամենքին յայտնի է պօդրեադչիկ Թ.-ի վարմունքը, որ նա հարիւրաւոր մարդկանց զրկեց աշխատութեան վարձից, մատնելով նրանց վերջին չուսահատութեան... Մտաբերելով այս բոլոր խճճւած հանգամանքները, որ չրջապատում են բանւորական աշխատանքը, չատ հեշտ է եզրակացնել, թէ ո՛րքան ծայրալեղ աստիճանի անապահով է բանւորների դրութիւնը Կարսում։ Այո, թէև նրանք ապրում և աշխատում են խմբերով, թէև կեանքի բոլոր հանգամանքներում կապւած են նրանք իրար հետ, բայց այդ միութիւնը ոչ մի արտայայտութիւն չ'ունի կեանքի մէջ, նրանց աշխատութեան և ընդհանուր չահերի նկատմամբ։ Բանւորները խմբւած են, միացած են իրար հետ, որովհետև կեանքի նեղ հանգամանքները՝ աղքատութիւնը, պանդխտութիւնը, պարապմունքի ընդհանուր լինելը ստիպում են նրանց իրար հետ լինել... Իսկ գիտակցական միութիւն, ընկերական ընդհանուր ներդաշնակութիւն, ընդհանուր չահերի և ինտերեսների լայն հասկացողութիւն,—այդ բոլորը չը կայ բանւորների մէջ։ Հէնց այդ միութեան և ոյժերի ընդհանուր կապակցութեան (association) բացակայութիւնից՝ առաջանում է Կարսի բանւորների թչւառ և ընկած դրութիւնը։